

## ԵՌԱՄՍՅԱԿԱՅԻՆ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ

### 2019 Թ. ՀՈԿՏԵՄԲԵՐ-ԴԵԿՏԵՄԲԵՐ ԱՄԻՍՆԵՐԻ ԸՆԹԱՑՔՈՒՄ

#### ԿԱՏԱՐՎԱԾ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

1. Ընդունվել և ուսումնասիրվել են կրթության, գիտության ոլորտի կազմակերպություններից և նախարարության ստորաբաժանումներից բյուջետային և ՄԺԾԾ հայտեր,
2. Մշակվել են կրթության, գիտության ոլորտի բյուջետային գործընթացի շրջանակում տարեկան բյուջետային ոչ ֆինանսական ցուցանիշներ,
3. ՀՀ ԿԳՄՍ նախարարության 2020 թվականի «ՎԻՅՆԱ» բյուջեի հաշվարկներին մասնակցություն և հավելվածների մշակում/լրամշակում (ելքային ծրագրերի և միջոցառումների գծով արդյունքային (կատարողական) ցուցանիշների եռամսյակային (աճողական) համամասնությունները, այն ծրագրերի միջոցառումների ցանկը, որոնց գծով հատկացումները տնտեսվարող սուբյեկտներին տրամադրվելու են դրամաշնորհների տեսքով),
4. Կազմվել են պայմանագրեր նախարարության ենթակայության ուսումնական հաստատությունների (նախնական և միջին մասնագիտական) առանձին ծրագրերի մասով (ինչպես նաև կատարվել է 68 հանրակրթական դպրոցների մասով հաշվարկ և վերահաշվարկ, կազմվել են համապատասխան համաձայնագրեր),
5. Կատարվել են հաշվարկներ «OECD PISA-2021 Armenia» ծրագրի իրականացման համար, կազմվել է համապատասխան ծախսերի նախահաշիվ, ապահովվել են ծրագրի իրականացման համար համապատասխան աշխատանքներ (այդ թվում՝ կազմվել է ՀՀ կառավարության որոշման նախագիծ՝ ծրագրին մասնակցելու անդամավճարի ապահովման համար):
6. Ընդունվել են և ներկայացվել են հաստատման նախարարության ենթակա ուսումնական հաստատությունների նախահաշիվները, տարիֆիկացիաները և հաստիքային ցուցակները (ինչպես նաև կատարվել է թվով 108 հանրակրթական դպրոցների ուսուցչական հաստիքների աշխատավարձերի համեմատություն 2018 թվականի հետ՝ ստուգելու 10 տոկոս աճի ապահովումը),
7. Ուսումնասիրվել և վերլուծվել են կրթության, գիտության ոլորտի կազմակերպությունների ընթացիկ հաշվետվությունները, պատրաստվել են և ներկայացվել են հաստատման համապատասխան ֆինանսավորման հայտեր («Գնահատման և թեստավորման կենտրոն» ՊՈԱԿ, «Հայաստանի ազգային պոլիտեխնիկական համալսարան» հիմնադրամի ուսանողների երիտասարդ

- ինժեներների մրցույթին մասնակցության հաշվետվություններ, ինչպես նաև 24 մարզադպրոցների ընթացիկ միջոցառումների հաշվետվություններ),
8. Կատարվել է աշխատանք գանձապետական հաշիվների կառավարման Client Treasury էլեկտրոնային համակարգում (ծախսերի նախահաշիվների, պայմանագրերի քաղվածքների, ժամանակացույցերի մուտքագրում)
  9. Ուսումնասիրվել և ամփոփվել են ՀՀ բոլոր հանրակրթական դպրոցների (ՀՀ ԿԳՄՍ նախարարության ենթակայության, Երևանի քաղաքապետարանի ենթակայության, մարզպետարանների ենթակայության)՝ 2016-2018 թվականների ծախսերը (կոմունալ, գրասենյակային, տնտեսական, գործուղման և այլ), կատարվել են համապատասխան հաշվարկներ՝ դպրոցների ֆինանսավորման գործակիցների դուրսբերման համար:
  10. Կազմվել են հրամանների նախագծեր (ՀՀ 2020 թվականի պետական բյուջեով համապատասխան ծրագրերի շրջանակներում իրավաբանական անձանց սուբսիդիաների, նվիրատվությունների, նպաստների և դրամաշնորհների հատկացման գործընթացի պատասխանատու ստորաբաժանումների ցանկը հաստատելու մասին, «ՀՀ 2020 թվականի պետական բյուջեի մասին» ՀՀ օրենքով ՀՀ ԿԳՄՍ նախարարությանը հատկացված միջոցների հաշվին ապրանքների, աշխատանքների և ծառայությունների գնման գործընթացներն իրականացնելու նպատակով պատասխանատու ստորաբաժանումներ, գնումների համակարգող և գնման գործընթացների կազմակերպման ժամանակացույցը հաստատելու մասին):

Բացի վերը նշված աշխատանքներից իրականացվել է նաև.

- Մշակութային ոլորտի (թատրոն, քուլեջ և այլն) ՊՈԱԿ-ների նորոգման և այլ շինարարական աշխատանքների կապիտալ ծախսերի տարեկան ամփոփում՝ ըստ բյուջեի և ՀՀ կառավարության որոշումների:
- Աշխատանք Armeps և PPCM համակարգերում (վճռված արձանագրությունների ստուգում և հաստատում/մերժում, աշխատակարգային տվյալների կցում համապատասխան բաժիններին, պայմանագրերի, ԳՊ փոփոխման հայտերի ստուգում և հաստատում և այլն):
- Կազմվել են մի շարք գրություններ, կատարվել մի շարք հանձնարարականներ (ՀՀ վարչապետի, ՀՀ Ազգային ժողովի, ԱԺ առանձին պատգամավորների, ՀՀ ֆինանսների նախարարության և այլ պետական մարմինների), տրամադրվել է պահանջվող տեղեկատվություն համապատասխան մարմիններ և կազմակերպություններ, կատարվել են այլ աշխատանքներ:

ՖԻՆԱՆՍԱՎՈՐՄԱՆ ԲԱԺՆԻ ՓՈՐՁԱԳԵՏ՝

ՍՈՖՅԱ ՍԱՐԳՍՅԱՆ

«17» «հունվար» 2020թ.